

Ամերիկյան գրականություն, Պատմվածք, Արձակ

16+

Թարգմանիչ՝ Վահան Վարդանյան

«Երրորդային դարաշրջանի բեկորը» առաջին անգամ տպագրվել է «Քոլյերս Ուիքլի» շաբաթաթերթում, 1901 թվականի հունվարին:

Ձեկ Լոնդոն

Երրորդային դարաշրջանի բեկորը

Ես հենց սկզբից ձեռքերս լվանում եմ: Այդ ամենը հորինել եմ ոչ թե ես, այլ նա, և ես մտադիր չեմ պատասխան տալ նրա պատմության համար: Նկատի ունեցեք, ես այս նախնական վերապահումներն անում եմ, որպեսզի ոչ ոք իմ ազնվության վրա չկասկածի: Ես ամուսնացած եմ, ինչ-որ դիրքի եմ հասել և, որպեսզի չարատավորեմ այն մարդկանց բարի անունը, որոնց հարգանքին արժանանալու պատիվն եմ ունեցել, ու չվնասեմ մեր երեխաներին, ես իրավունք չունեմ ռիսկի դիմել, ինչպես մի ժամանակ, պատանեկան թեթևամտությամբ և անհոգությամբ պնդելով այն, ինչում հավատացած չեմ: Այսպես ուրեմն, կրկնում եմ, ես ձեռքերս լվանում եմ, իմ վրայից վերցնում եմ ամեն մի պատասխանատվություն այդ Նիմրոդի, հզոր որսորդի, այդ անճոռնի, պեպեսոտ, երկնագույն աչքերով Թոմաս Սթիվենսի համար:

Հիմա, երբ ես ամեն ինչ բացեցիքաց ասացի և մաքուր եմ ինքս իմ առջև ու մեր բոլոր ժառանգների առջև, որքան էլ որ կիսն այդպիսիք պարզևի ինձ, ես կարող եմ ինձ թույլ տալ մեծահոգի լինել: Ոչ մի վատ խոսք չեմ ասի այն մասին, ինչ Թոմաս Սթիվենսն է ինձ պատմել, դեռ ավելին, ես ընդհանրապես կարծիքս ինձ կպահեմ: Եթե ինձ հարցնեն՝ ինչո՞ւ, ես միայն կարող եմ պատասխանել, որ այդ մասին ոչ մի կարծիք չունեմ: Ես շատ եմ մտածել, ծանր ու թեթև արել, գնահատել, բայց ճիշտ եմ ասում, ոչ մի եզրակացության չեմ հանգել, իսկ դրա պատճառն այն է, որ ես Թոմաս Սթիվենսին չեմ հասնի: Եթե նա ճշմարտությունն է ասել՝ լավ, եթե սուտ է ասել՝ նույնպես լավ: Որովհետև ո՞վ կարող է նրա խոսքերը հաստատել կամ հերքել: Ես խաղից դուրս եմ գալիս, իսկ թերահավատները կարող են վարվել այնպես, ինչպես ժամանակին ես եմ վարվել. գտեք հիշյալ Թոմաս Սթիվենսին և նրա հետ գրուցեք այն ամենի մասին, ինչ ես եմ ուզում ձեզ պատմել: Դուք կհարցնեք, թե որտե՞ղ գտնել նրան: Ինչպե՞ս, հյուսիսային լայնության հիսուներեք աստիճանի ու բևեռի միջև և Սիբիրի արևելյան ափերի ու Լաբրադորի արևմտյան վերջավորության միջև ընկած որևէ տեղում, որտեղ որս կա: Նա, անկասկած, այդ կողմերում կլինի. միանգամայն որոշակի տեղ է, ազնիվ խոսք եմ ասում, այնպիսի մարդու ազնիվ խոսք, որը հոգում է իր ապագայի մասին, ուստի և չի խորամանկում ու մեղանչելուց հեռու է մնում:

Գուցե և Թոմաս Սթիվենսը մեծ սուտասան է, բայց չեմ կարող չասել, որ նա իմ ճամբարն եկավ հենց այն ժամին, երբ ես մենակ նստել ու մտածում էի, որ ինձ հազար մղոն է բաժանում այն տեղերից, որտեղ կարելի է քաղաքակիրթ մարդու հանդիպել: Տանջալից շատ ամիսների ընթացքում առաջին անգամ մարդ տեսնելով, ես քիչ մնաց վեր թռչեի ու գրկեի նրան (իսկ ես բոլորովին էլ հակված չեմ դեպի զգացմունքների բուռն դրսևորումը), սակայն նրա համար այդ այցելության մեջ, կարծեմ, ոչ մի գարմանալի բան չկար: Նա պարզապես տեսել էր կրակը ու եկել. բարևեց որսորդների ու թափառաշրջիկների ձևով և, մի կողմի վրա քաշելով իմ դահուկները, իսկ մյուս կողմի վրա՝ շներին, իր համար տեղ բացեց օջախի մոտ: «Անցա մի պտղունց սողա ուզելու,— ասաց նա,— և միաժամանակ իմանալու՝ արդյոք մի քիչ լավ թուրթուն չե՞ք ունենա»: Նա հանեց հին ծխամորճը, մի լավ լցրեց այն և, անտարբերությամբ, ոսկեգույն չոր ոլորուկների հալալ կեսը իմ քիսայից դատարկեց իրենի մեջ: Այդ, թուրթունը լավն էր: Առանց խղճի խայթ զգալու նա ծուխը ներս էր քաշում երանությամբ, իսկ ես նայում էի նրան ու ծխողիս սիրտը հրճվում էր:

Որսո՞րդ: Գազանո՞րս: Ոսկու գործով զբաղվո՞ղ: Նա ուները վեր քաշեց: Ոչ, հենց այնպես թափառում է այս տեղերում: Վերջերս եղել է Մեծ Գերության մոտ, մտածում է զբոսանք կատարել դեպի Յուբոն: Քոչիմի ֆակտորիայում Զլոնդայկի ոսկու հանքերի մասին էին խոսում, և ինքը որոշել է տեսնել, թե ինչ կա այնտեղ:

Ես նկատեցի, որ նա Զլոնդայկը հին ձևով, տեղական լեզվով անվանում է Յլուսիսային եղջերվի Գետ. հպարտ բնիկների սովորությունը, որոնք չեն ուզում, որ իրենց շփոթեն չեչակների ու զանազան փափկասունների հետ: Բայց դա նրա մոտ այնքան անմիջական ու պարզ ստացվեց, որ չէր վիրավորում, և ես ներեցի նրան: Նա ասաց, թե քանի դեռ չի բարձրացել լեռները ու չի իջել դեպի Յուբոն, թերևս վատ չէր լինի, որ ինքը մի անգամ էլ Բարեհուսո ամրոց անցներ:

Պետք է ասել, որ Բարեհուսո ամրոցը գտնվում է հեռու Յլուսիսում, Բևեռային շրջանագծից այն կողմ, որտեղ հազվադեպ է մարդը ուտք դնում, ու երբ կեսգիշերին չգիտես որտեղից այսպիսի թափառաշրջիկ է հայտնվում, նստում կրակի մոտ և այնպիսի բառեր գործածում, ինչպես դեպի Յուբոն «զբոսանք կատարել» և Բարեհուսո ամրոցն «անցնել», լավ ժամանակն է վեր կենալ ու սթափվել: Եվ ես շուրջս նայեցի՝ քամուց պաշտպանող բրեզենտ, նրա տակ՝ սոճու ճյուղեր, որոնց վրա գիշերը մորթե վերմակներն էի փռում, տեսա ուտեստեղենով պարկեր, լուսանկարչական ապարատ, խարույկի շուրջը պառկած շների շնչառությունից բարձրացող գոլորշի, իսկ վերևում՝ հյուսիսասիայի վիթխարի պաստառը, որը փռվել էր երկնքում հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք: Ես ցնցվեցի: Յլուսիսի գիշերներն ինչ-որ կախարդանք ունեն, որ ճահիճների տենդի նման մինչև մարդու ոսկորներն է թափանցում: Դեռ չես հասցրել շուրջդ նայել՝ արդեն նրա իշխանության տակ ես ու գետին ես տապալված: Յետո նայեցի դահուկներին. դրանք երեսնիվայր, խաչաձև ընկած էին այնտեղ, որտեղ նա էր գցել: Տեսա նաև քիսան: Ծխելիքիս պատկառելի պաշարի առևձայն կեսը կարծես գոյություն էլ չէր ունեցել: Բոլոր կասկածներս ցրվեցին: Ուրեմն աչքի՛ս չի երևացել:

Ճիշտ է, անմարդկային զրկանքները նրան խենթացրել են, մտածեցի ես, նայելով հյուրիս աչքերի մեջ. ինչպես երևում է՝ սա ոսկե տենդի զոհերից մեկն է, մեկը նրանցից, ովքեր վաղուց մոռացել են հայրական տունը և անհանգիստ թափառում են անձայրածիր ու անբերրի տարածություններում: Ե՛, ինչ կա որ, թող խոսի, մինչև նրա մթազնած գիտակցությունը, թերևս, կպարզվի:

Եվ ահա ես աշխատում էի խոսակցության մեջ քաշել նրան, ու նա շուտով, ի զարմանս իմ, սկսեց գործիմացությամբ խոսել որսի մասին, գազանների ու նրանց բնավորության մասին: Պարզվում է, որ նա մի անգամ սիբիրյան գայլ է խփել Այասկայի ծայր արևմուտքում և քարայծ՝ Ժայռալեռների հենց սրտում: Նա տեղեր գիտե, որտեղ մինչև այսօր էլ վերջին բիզոնն է թափառում, նա ինչ-որ բանից վախեցած կարիբուների հարյուր հազարանոց հոտն է հետապնդել կրկակոխ և Անբերրի հողերում մշկաեզան ձմեռային արահետի վրա է քնել:

Եվ այս պատմությունները լսելով, ես նրա մասին ունեցածս կարծիքը փոխեցի (առաջին, բայց ամենևին էլ ոչ վերջին անգամ) ու որոշեցի, որ իմ առջև ճշմարտությունն է կանգնած: Զգիտեմ ինչու, բայց մտքովս անցավ նրան հաղորդել այն մարդուց լսածս պատմությունը, որն այնքան երկար էր ապրել այս կողմերում, որ այլևս չէր կարող չփչել. նա հավատացնում էր, թե սուրբ Իլիի լեռան զառիթափ լանջերին մի վիթխարի արջ է ապրում, որը երբեք ավելի ցած դեպի տափարակ լանջերը չի իջնում: Եվ ահա աստված այնպես է ստեղծել, այնպես է հարմարեցրել այդ գազանին, որ նրա աջ կողմի երկու թաթերը, առջևինն ու հետևինը, մի ոտնաչափ կարճ են ձախակողմյանից: Եվ դուք, իհարկե, կհամաձայնվեք, որ դա շատ հարմար է:

Առաջին դեմքով, ներկա ժամանակով սկսեցի պատմել, թե ինչպես անձամբ ինքս որսացել եմ այդ հազվագյուտ գազանին, ավելի ճշմարտաման դարձնելու համար համեմեցի տեղական կոլորիտով, ամեն ինչ, ինչպես հարկն է, գունազարդեցի, ու նայում եմ իմ ունկնդրին, հույս ունենալով, որ պատմածս նրան կշշմեցնի:

Բոլորովին էլ ոչ: Եթե նա կասկածեր՝ ես կներեի նրան: Եթե նա վիճեր, ասեր, թե այդպիսի որսը վտանգավոր չէ, չէ որ գազանը չի կարող շրջվել ու հակառակ կողմը փախչել,— թեկուզ մի բառով առարկեր, ես ամուր կսեղմեի նրա ձեռքը, ազնիվ մարդու ձեռքը: Բայց բոլորովին էլ ոչ, նա փոթկաց, ինձ նայեց ու նորից փոթկաց. հետո պատշաճը հատուցեց իմ թուրքին, ոտքը դրեց ծնկներիս և առաջարկեց մոքասիները շոշափել: Դրանք մուկլուկներ էին, որպիսիք Այասկայի Եսկիմոսներն են հագնում. կարված ջլերով, չզարդարված ոչ ուլունքներով, ոչ էլ որևէ այլ բանով:

Բայց ինձ զարմացրեց կաշին, որից դրանք կարված էին: Դա կես դյույմ հաստություն ուներ, և ծովացուլի կաշի էր հիշեցնում, բայց թե նմանությունը դրանով էլ վերջանում էր, քանի որ ոչ մի ծովացուլ չի կարող այդպիսի զարմանալի մազածածկով պարծենալ: Կողքից, ոտնակոճերի վրա, այն գրեթե ամբողջությամբ մաշվել էր, որովհետև ամեն օր ձյան ու թփուտների մեջ էր խրվում, բայց հետևից ու վերևի կողմից, ավելի պաշտպանված տեղերում, սև էր, անփայլ և արտասովոր կերպով խիտ: Ես դժվարությամբ քանդեցի մորթին, որպեսզի նայեմ բրդատակի հրաշալի աղվամազը, որով աչքի են ընկնում Զյուսիսի գազանները, բայց այդպիսին չկար: Սակայն մազերը արտակարգ երկար էին: Իրոք, չվնասված, չմաշված կղզյակներում դրանք յոթ, իսկ երբեմն էլ ութ դյույմի էին հասնում:

Ես նայեցի իմ հյուրին, իսկ նա ոտքը վերցրեց ծնկներիս վրայից ու հարցրեց.

— Զը՞, ոնց է, ձեր ա՛րջն էլ այսպիսի մորթի ունի:

Ես գլուխս օրորեցի:

— Ոչ ծովում, ոչ ցամաքում ոչ մի գազանի վրա այսպիսին չեմ տեսել,— անկեղծորեն խոստովանեցի ես:

Կաշվի հաստությունը և մազի երկարությունը ինձ մտահոգեցին:

— Սա մամոնտի մորթի է,— ամենասովորական ձայնով ասաց նա:

— Դատարկ բան է,— բացականչեցի ես, չկարողանալով զսպել իմ թերահավատությունը:— Սիրելիս, մամոնտը վաղուց անհետացել է երկրի երեսից: Զողում հայտնաբերված քարացած մնացորդներից և այն սառած կմախքից, որ սիբիրյան արևը հարկ համարեց հալեցնել ու դուրս բերել սառցադաշտի խորքից, մենք գիտենք, որ ժամանակին այդ կենդանին գոյություն է ունեցել, բայց մենք նաև գիտենք, որ այն մինչև մեր օրերը չի ապրել: Մեր հետազոտողները...

— Ձեր հետազոտողները,— անհամբերությամբ ընդհատեց նա:— Թյո՛ւ: Տկար ցեղ է: Նրանց մասին լսել անգամ չեմ ուզում: Բայց ինձ ասա, մարդ, ի՞նչ գիտես մամոնտի և նրա սովորությունների մասին:

Այստեղ անպայման մի բան կա, և ես խոսք քաշեցի. հիշողությունս փորփրելով, սկսեցի պատմել այն, ինչ գիտեի մամոնտների մասին: Ամենից առաջ ընդգծեցի, որ այդ կենդանին նախապատմական է, և ի պաշտպանություն դրա ներկայացրի իմ տրամադրության տակ գտնվող բոլոր փաստերը: Ես վկայակոչեցի սիբիրյան գետերի ավազե ծանծաղուտները, որտեղ առատությամբ մամոնտի կմախքների մնացորդներ են գտնում, հիշատակեցի այն հսկայական քանակությամբ մամոնտոսկրները, որ Այյասկայի առևտրական Ընկերությունն է գնել Եսկիմոսներից, ասացի, որ անձամբ ինձ էլ է վիճակվել Զլոնդայկի վտակներում ոսկեբեր ավազի միջից երկու ժանիք հանել՝ մեկը վեց, մյուսը՝ ութ ոտնաչափ երկարությամբ:

— Եվ այս բոլոր բրածո մնացորդները,— եզրափակեցի ես,— մենք գտնում ենք վաղ ժամանակներում նստվածք տված ջրաբերուկ ապառների մեջ:

— Զիշում եմ, փոքր հասակում քարացած ձմերուկ եմ տեսել,— այստեղ Թոմաս Սթիվենսը փոթկաց (նա շատ զգվելի էր փոթկացնում):— Նշանակում է գոնե որոշ ֆանտազյորներ երևակայում են, թե իբր իրենք ձմերուկ են աճեցնում և ուտում, իսկ իրականում շատ վաղուց արդեն ոչ մի ձմերուկ էլ չկա:

— Իսկ նրանք ինչո՞վ կսնվեին,— շարունակեցի ես, ուշադրություն չդարձնելով այդ երեխայական փաստարկի վրա, որը գործի հետ կապ չուներ:— Այդպիսի հսկաներին կերակրելու համար հողը պետք է միշտ և առատորեն պտղաբերի: Զյուսիսում ոչ մի տեղ այդպիսի առատություն չես գտնի: Զետևաբար, մեր օրերում մամոնտ գոյություն ունենալ չի կարող:

— Ես ներում եմ բևեռային հողերի վերաբերյալ ձեր լիակատար անտեղյակությունը, չէ որ դուք դեռ երիտասարդ եք ու քիչ եք ճանապարհորդել, բայց մի բանում պատրաստ եմ ձեզ հետ համաձայնվել: Մամոնտներ այլևս չկան: Որտեղի՞ց գիտեմ: Ահա այս ձեռքով եմ սպանել վերջին մամոնտին:

Այսպես էր ասում Նիմրոդը, հզոր որսորդը: Ես խանձողը շարտեցի շների վրա, նրանց հրամայեցի դադարեցնել դժոխային ոռնոցը ու սպասեցի: Դե, իհարկե, այս հազվագյուտ սուտասանը չի համբերի և սուրբ Իլիի լեռան արջի համար վարձահատույց կլինի:

— Այսպես է եղել,— առիթին հարմար դադար տալուց հետո վերջապես սկսեց նա,— մի անգամ ես ճամբար խփեցի...

— Իսկ որտե՞ղ,— ընդհատեցի ես:

Նա ձեռքով ցույց տվեց հյուսիս-արևելքի կողմը, որտեղ անհայտ-անծայրածիր տարածություններ են փռված. քչերն են համարձակվել ոտք դնել այդ հողը, ու գրեթե ոչ ոք չի վերադարձել այնտեղից:

— Ճամբար խփեցի, և Կուլչն էլ պատվում էր շուրջս: Գեղեցիկ շուն էր, մեր կողմերում ավելի լավը չես գտնի: Նրա հայրը գտարյուն մեյլմյուլթ էր, Բերինգյան ծովում գտնվող Պաստիլիկայից, իսկ նրա մորը նույնպես խելամտորեն էի ընտրել՝ լավագույնը այն շներից, որ բազմացնում են Յուդոգոնի ծոցի մոտ: Հիանալի խառնուրդ էր, կարող էք ինձ հավատալ: Այսպես ուրեմն, հենց այդ օրը, հիշում եմ, Կուլչը ծննդաբերեց վայրի գայլից. ձագերից հրաշալի շներ կստացվեին՝ գորշ, երկարոտն, լայնակուրծք և խիստ տոկուն: Դուք նման բան լսե՞լ եք: Ես նոր ցեղատեսակ աճեցրի և ինչ ծրագրեր ասես որ չէի կազմել:

Ուրեմն, նա բարեհաջող ծննդաբերեց, ամեն ինչ կարգին էր: Ես պագել էի ու լակոտներին էի նայում՝ ամրակազմ, աչքերը փակ յոթ գազանիկներին, երբ հանկարծ իմ հետևում մի մռնչյուն լավեց, ասես պղնձե փողեր փչեցին: Փոթորկի նման ինչ-որ բան վրա հասավ, և ես չէի հասցրել ոտքի կանգնել, երբ ինձ տապալեց գետին, ու ես դեմքով խրվեցի հողի մեջ: Այդ ժամանակ լսեցի, թե ինչպես հառաչեց Կուլչը՝ ոնց որ մարդը, երբ բռունցքով փորին ես խփում: Կարող էք վստահ լինել, որ ես պառկած էի հանգիստ, միայն մի փոքր գլուխս շրջեցի ու տեսա, որ ինչ-որ մի վիթխարի մսակույտ է կախվել իմ վերևում: Հետո նորից աչքերիս առջև կապույտ երկինքը բացվեց ու ես ոտքի կանգնեցի: Եվ հասցրի տեսնել, թե ինչպես մի մագոտ կենդանի լեռ անհետացավ բացատի ծայրին գտնվող մացառուտներում: Մի պահ երևաց իմ մարմնի հաստությամբ ցցված պոչը: Մի ակնթարթ հետո իմ աչքերի առջև միայն մի շատ լայն բացվածք կար մացառուտում, բայց դեռ լսվում էր թնդյունը, կարծես փոթորիկն էր հեռանում. ճարճատում էին արմատախիլ արվող թփուտները, դղրոյունով ջարդվում ու տապալվում էին ծառերը:

Ես նետվեցի դեպի հրացանը: Հրացանը դրված էր գետնին, փողի տակ կոճղ կար. որպեսզի մեջը հող չցվեր: Այժմ ազուստից միայն տաշեղներ էին մնացել, փողը ծռվել էր, փակադակը՝ տափակել: Հետո աչքերով որոնեցի Կուլչին և... և, ձեր կարծիքով, ի՞նչ տեսա:

Ես գլուխս տարուբերեցի:

— Սատանայի թավայի վրա վառվեմ, թե որևէ բան մնացել էր նրանից: Եվ Կուլչը, և յոթ ամրակազմ կույր գազանիկները բոլորն էլ անհետացել էին: Այդ տեղում փափուկ հողի մեջ մի լպրծուն, արյունոտ փոս ընկած տեղ երևաց՝ մեկ յարդ լայնքով, իսկ եզրերին՝ խղճուկ մազափնջեր:

Ես երեք քայլ արեցի ձյան վրա, մի շրջան գծեցի ու նայեցի Նիմրոդին:

— Հրեշը երեսուն ոտնաչափ երկարություն ուներ, իսկ բոյը քսան ոտնաչափ էր,— բացատրեց նա,— յուրաքանչյուր ժանիքը վեց անգամ երեք ոտնաչափ էր: Ես ինքս էլ աչքերիս չհավատացի: Գուցե ինձ թվացե՞լ է, հապա կոտրված հրացանն ու թավուտի մեջ եղած բացվա՞ծքը: Իսկ ի՞նչ էին եղել Կուլչն ու լակոտները: Տեր աստված, հիմա էլ որ հիշում եմ Կուլչին, մարմինս դող է ընկնում: Չէ որ դա մի նոր Եվա էր: Նոր ցեղի նախամայրը: Եվ ահա վայրենի, կատաղած մամոնտը, իսկական երկրորդ ջրհեղեղի նման, նրանց ջնջեց երկրի երեսից: Ճիշտ եմ ասում, արյունով ներծծված հողը օգնություն էր աղերսում երկնքից: Հասկանալի է, ես վերցրի կացինն ու սկսեցի հետապնդել:

— Կացի՞նը,— իսկական հիացմունքով բացականչեցի ես, պատկերացնելով այդ տեսարանը:— Կացնով հարձակվել վիթխարի մամոնտի վրա, որը երեսուն ոտնաչափ երկարություն և քսան...

Նիմրոդը նույնպես աշխուժացավ և նույնիսկ փռթկաց հաճույքից:

— Ծիծաղից մեռնել կարելի է, հը՞,— բացականչեց նա:— Լավ պատմություն է: Դրանից հետո քանի անգամ ինքս եմ ծիծաղել, բայց այն ժամանակ ի՞նչ ծիծաղ կարող էր լինել: Ես խիստ գազազել էի հրացանի և Կլուչի համար: Ապա մի մտածեցեք: Անհետացավ բոլորովին մի նոր ցեղատեսակ, նրան դեռ ցուցակների մեջ էլ չէին գրել ու վկայագիր էլ չէին տվել ինձ: Շնիկները չհասցրին աչքերը բացել, չհասցրին թուղթ հանել նրանց համար, և արդեն նրանց ոչնչացրին: Լավ, ի՞նչ արած: Կյանքը լի է հիասթափություններով և դա ճիշտ է: Միսը ավելի համով է, երբ սոված ես լինում, իսկ անկողինը փափուկ է ծանր ճանապարհից հետո:

Այսպես ուրեմն: Կացինը վերցրի, ընկա գազանի հետևից և կրնկակոխ սկսեցի հետապնդել նրան: Բայց երբ նա ետ դարձավ ու հովհտով դեպի վերև սլացավ, ես կանգ առա, որ շունչ քաշեմ: Միաժամանակ ուտելիքի մասին էլ մի երկու բան կասեմ: Այնտեղ, լեռներում, ամեն ինչ հրաշալի է սարքված: Փոքրիկ, անձուկ կիրճերն անհամար են և իրար նման, ոնց որ երկվորյակներ, իսկ պատերը դիք են: Հովտի բերանում միշտ մի նեղ անցք է լինում՝ խցկված սառցադաշտերով կամ ձնհալի ջրերով: Հովտի կարելի է մտնել միայն այդ տեղով, բայց այդ անցքերը բոլորն էլ նեղ են, մեկը մյուսից նեղ: Հիմա ուտելիքի մասին. չէ որ դուք ճանապարհորդ եք և, ըստ երևույթին, Այասկայի ափերի մոտ, այնտեղ, Սիթիայի մոտերքում գտնվող կղզիներում ցեխի մեջ եք խրվել հորդառատ անձրևների ժամանակ: Եվ գիտեք, թե ինչ անտառներ ու կանաչներ կան այնտեղ, խիտ, հյութալի՝ իսկական ջունգլի: Դե այս տեղերում էլ նույնն է: Հողը պարարտ է, բարեբեր, ձարխոտն ու ամեն տեսակ կանաչները տեղ-տեղ մարդաբոյ են: Ամռան չորս օրից երեքը անձրև է գալիս, և ուտելիքը հազար մամոնտի կբավականացնի, իսկ մարդու համար անհրաժեշտ մանր որսի մասին խոսելն անգամ ավելորդ է:

Լավ, գործից խոսենք: Հովտի ելքի մոտ ես բոլորովին շնչասպառ եղա ու թողեցի հետապնդումը: Սկսեցի միտք անել ու հազիվ էի շունչ քաշել՝ զայրույթս ուժգին բորբոքվեց, և ես արդեն գիտեի, որ չեմ հանգստանա, մինչև մամոնտի տապակած ոտքը չճաշակեմ: Գիտեի նաև, որ այժմ Skookum mamook puka puk-ը անխուսափելի է. ներողություն եմ խնդրում, որ չինուկերեն եմ խոսում, ուզում էի ասել՝ մեծ կռիվն անխուսափելի է: Այսպես ուրեմն, իմ հովտի բերանը շատ նեղ էր, իսկ պատերը՝ խիստ դիք, և մի կողմից կախ էր ընկել մի երկու հարյուր տոննա քաշ ունեցող մի վիթխարի ժայռաբեկոր, և ոչ թե պարզապես կախ էր ընկել, այլ օրորվում էր. այդպիսիք նաև ճոճանակ են անվանում: Հենց այն, ինչ որ հարկավոր է: Ես վազեցի ճամբար, անընդհատ ետ նայելով՝ չլինի թե մամոնտը հովտից դուրս գա, ու փամփուշտներ վերցրի: Բայց դրանցից ինչ օգուտ, չէ որ հրացանը ջարդված է: Այնպես որ՝ բացեցի պարկուճները, վառողը դատարկեցի ասածս քարի տակ ու բիկֆորոյան պատրույգ դրեցի: Լիցքը մեծ չէր, բայց գլաժայռը ծուլորեն օրորվեց ու ցած ընկավ՝ փակելով անցքը, միայն մի ճեղք մնաց գետակի հոսելու համար: Այժմ գազանը արդեն իմն էր:

— Ինչպե՞ս թե ձերը,— կասկածեցի ես:— Որտե՞ղ է տեսված, որ մարդը կացնով մամոնտ սպանի: Կամ էլ մեկ ուրիշ բանով:

— Մի՞թե ես ձեզ չասացի, որ ուղղակի կատաղել էի զայրույթից,— պատասխանեց վիրավորված Նիմրոդը:— Այո, ես գազազել էի Կլուչի և հրացանի համար: Եվ մի՞թե ես որսորդ չեմ: Մի՞թե ինձ համար հետաքրքիր չէ այդպիսի անկրկնելի մի որս անելը: Իսկ դուք ասում եք՝ կացին: Թյո՛ւ: Ախր նա ինձ բոլորովին էլ պետք չեկավ: Դա այնպիսի որս էր, որպիսին, երևի, միայն այն ժամանակ է պատահել, երբ աշխարհը դեռ երիտասարդ է եղել ու քարանձավային մարդը քարե կացնով է որս արել: Ասեմ, որ իմ կացնից ավելի շատ օգուտ չկար, քան քարե կացնից: Բայց մի՞թե ճիշտ չէ, որ մարդն ընդունակ է շնից ու ձիուց ավելի շատ ճանապարհ անցնել, որ նա ավելի դիմացկուն է, որովհետև շատ ավելի խելոք է:

Ես գլխով արեցի:

— Եվ ի՞նչ:

Բայց ես, կարծես, արդեն հասկացել էի ու սպասում էի շարունակությանը:

— Եթե իմ հովտը ծայրից ծայր անցնեիր՝ մի հինգ մղոն կլիներ: Բերանը փակված էր: Նա դուրս գալու տեղ չունի: Պարզվեց, որ այդ մամոնտը խիզախ գազաններից չէր և այժմ իմ իշխանության ներքո էր: Ես նորից սկսեցի հետապնդել նրան. ոռնում էի դևի պես, քարերով խփում. ստիպեցի երեք անգամ անցնել ամբողջ հովտով, իսկ հետո գնացի ընթերելու: Հասկանո՞ւմ եք, թե բանն

ինչո՞ւմ է: Մրցավազք: Մարդ և մամոնտ: Ձիարշավարան, իսկ դատավորների փոխարեն՝ արև, լուսին և աստղեր:

Ես այդ բանի վրա երկու ամիս կորցրի, բայց իմ ասածն արեցի: Եվ սա արդեն հեքիաթ չէ: Ես քշում էի նրան շրջան շրջանի հետևից, ինքս վազում էի ներսի կողմով, վռագ-վռագ կծում էի ապխտած միսն ու սաղմոնի խավիարը, իսկ վազքերի միջև ընկած ժամանակամիջոցում հասցնում էի մի երկու բույս քնել: Իհարկե, լինում էր, որ նա հուսահատությունից ըմբոստանում էր և սլանում ինձ վրա: Այդ ժամանակ ես վազում էի դեպի գետակը, որտեղ հողը փափուկ էր, և նզովում անիծյալ գազանին ու նրա բոլոր նախնիներին և գրգռում էի, որ ավելի մոտենա: Բայց նա չափից դուրս խելոք էր, գիտեր, որ կարող է ցեխի մեջ թաղվել: Մի անգամ նա ինձ քշեց դեպի դիք ժայռը, և ես սողացի խոր ճեղքի մեջ ու թաքնվեցի: Ամեն անգամ, երբ նա կնճիթը մոտեցնում էր ինձ, ես նրան հարվածում էի կացնով, մինչև նա կատաղությունից այնպիսի ոռնոց էր բարձրացնում, որ թմբկաթաղանթներս ուղղակի պայթում էին: Նա գիտեր, որ ես թակարդն եմ ընկել, բայց ինձ հասնել չէր կարող, և հենց դա էլ կատաղեցնում էր նրան: Բայց թե նա հիմար չէր: Հասկանում էր, որ քանի դեռ ես ճեղքի մեջ եմ, ոչ մի բան իրեն չի սպառնում, ու որոշեց ինձ բաց չթողնել այնտեղից: Եվ նա միանգամայն իրավացի էր: Միայն թե ուտելիքի մասին չէր մտածել:

Մոտակայքում ոչ ուտելիք կար, ոչ ջուր. պարզ բան է, նա չէր կարող երկար ժամանակ շարունակել պաշարումը: Նա ժամերով հսկում էր ճեղքի մոտ և վերմակի պես մեծ ականջները թափահարում քշելով մոծակներին: Հետո նա ծարավում էր ու սկսում այնպես փողիարել, որ հողը դողդողում էր, և կարողացածի պես հայիոյում էր ինձ: Դրանով նա ուզում էր ինձ ահաբեկել, և որոշելով, որ ես բավականաչափ վախեցա, նա կամացուկ ետ-ետ էր գնում ու փորձում փախչել դեպի գետակը: Երբեմն ես նրան թույլ էի տալիս հեռանալ գրեթե մինչև ջուրը. այն ընդամենը մեկ-երկու հարյուր քայլի վրա էր.— և այն ժամանակ դուրս էի թաչում, իսկ նա անմիջապես թնդյունով ետ էր սլանում: Բայց նա շուտով կռահեց իմ խորամանկությունը ու տակտիկան փոխեց: Այսպես ասած՝ հասկացավ ժամանակի դերը: Ոչ մի բառով չնախազգուշացնելով, նա խելագարի պես սլանում էր դեպի գետակը, հույս ունենալով ետ դառնալ նախքան ես կհասցնեմ փախչել: Վերջ ի վերջո նա թունդ հայիոյեց ինձ, պաշարումը թողեց ու դանդաղ գնաց դեպի ջուրը:

Դա միակ անգամն էր, որ նա ինձ հաղթեց, բայց այդ երեք օրից հետո մրցավազքը ոչ մի ժամ չդադարեց: Վեց օր շարունակվեցին այդ մրցավազքերը առանց որևէ կանոնի՝ արա ինչ որ քեֆը ուզում է. բայց դա բոլորովին էլ դուր չէր գալիս նրան: Հագուստս ծվեն-ծվեն էր եղել, կարկատելու ժամանակ չկար, այնպես որ ես, ի վերջո, մերկ մնացի, ինչպես բնության զավակը՝ մի ձեռքիս կացին, մյուսում՝ քար: Ոչ գիշերը, ոչ ցերեկը կանգ չէի առնում, միայն հազվադեպ մի փոքր ննջում էի որևէ ճեղքում: Ինչ վերաբերում է մամոնտին, նա հենց իմ աչքի առաջ նիհարում էր, քաշից ամենաքիչը մի քանի տոննա կորցրեց ու դարձավ նյարդային, ինչպես պառաված օրիորդ ուսուցչուհին: Բավական էր, որ մոտենայի նրան ու ձայն տայի կամ հեռվից քարով խփելի, նա անմիջապես վեր էր թռչում ու ամբողջ մարմնով դողում վախկոտ քուռակի նման: Իսկ հետո նորից թափ էր առնում, պոչն ու կնճիթը ցցում: Չէր նայում ինձ վրա. աչքերը կրակի պես վառվում էն, հայիոյում է ինձ, անիծում սաստիկ: Շատ անամիթ գազան էր, ավազակաբարո և անհավատ:

Բայց նա վերջ ի վերջո խաղաղվեց, միայն թե անընդհատ նվնվում էր ու թնկթնկում փոքրիկ երեխայի պես: Նա բոլորովին ընկճվեց ու դարձավ խեղճ, դժբախտ: Մի վիթխարի սար է, բայց դողդողում է սառած խաշաչրի պես: Միրտն սկսեց խփել. հարբածի պես օրորվում էր և գետնին թավալվում արյունոտելով ոտքերը: Երբեմն էլ վազում էր ու լալիս: Աստվածներն անգամ կգթային նրան, նույնիսկ դուք չէիք կարողանա ձեր արցունքները զսպել, ոչ ոք չէր դիմանա: Խղճայի էր նրան նայելը՝ այդքան վիթխարի և այդքան դժբախտ, բայց իմ սիրտը է՛լ ավելի կարծրացավ, ու ես քայլերս մեծացրի: Վերջապես բոլորովին ուժասպառ արեցի նրան, ու նա գետին տապալվեց՝ հուսահատ, շնչահեղձ, սովից ու ծարավից տանջվելով: Տեսնելով, որ նա չի կարող տեղից շարժվել, ես կտրեցի նրա ջլերը ու հետո գրեթե ամբողջ օրը կացնով խորանում էի նրա մեջ, իսկ նա ֆսֆսացնում էր ու հեկեկում, մինչև որ ես այնքան խորը գնացի նրա մեջ, որ նա լռեց: Այդ, նա երեսուն ոտնաչափ երկարություն, քսան ոտնաչափ բոյ ուներ, իսկ ժանիքների միջև կարելի էր ճոճ կապել ու քնել ուզածիդ պես: Ճիշտ է, ես նրա ամբողջ հյուսվածքը քամել էի, բայց թե նրա համը վատ չէր և տապակած ոտքերը մի տարի կբավականացնեին: Ես ամբողջ ձմեռն այնտեղ անցկացրի:

— Իսկ որտե՞ղ է այդ հովիտը,— հետաքրքրվեցի ես:

Նա ձեռքով արեց ինչ-որ տեղ, դեպի հյուսիս-արևելք և ասաց.

— Լավն է ձեր թուրթուրը: Դրա հալալ կետը ես կտանեմ իմ քիսայով, իսկ նրա մասին մինչև մահ կհիշեմ: Ի նշան այն բանի, թե որքան բարձր եմ գնահատում ձեր սիրալիրությունը, թույլ տվեք ձեր մոքասիներին փոխարեն այս մուկլուկները հրամցնել ձեզ: Սա հիշատակ է Կուլչից և յոթ կույր լակոտներից: Եվ բացի դրանից, դրանք հիշեցնում են մի իրադարձություն, որպիսին չի տեսել պատմությունը՝ աշխարհի ամենահինագույն և ամենավաղ շրջանի գազանացեղի վերջին ներկայացուցչի ոչնչացումը: Իսկ մուկլուկները երբեք չեն մաշվի: Մուկլուկներն ինձ հանձնելով, նա լցրեց ծխամորճը, հրաժեշտ տալով ձեռքս սեղմեց և անհետացավ ճյուղաճածկ անապատում: Դուք, իհարկե, չեք մոռացել, որ ես հենց սկզբից իմ վրայից վերցրի այս պատմության համար պատասխանատվությունը, իսկ բոլոր թերահավատներին խորհուրդ եմ տալիս այցելել Սմիթսոնի ինստիտուտ: Եթե նրանք համապատասխան երաշխավորագրեր ներկայացնեն և սահմանված ժամանակին գան, նրանց, անկասկած, կընդունի պրոֆեսոր Դովլիդսոնը: Այժմ մուկլուկները նրա մոտ են պահվում, և նա, եթե հարկ լինի, կհաստատի, թե դրանք ինչ ձևով են ձեռք բերվել, կամ էլ թե, համենայն դեպս, ինչ կյանքից են դրանք կարված: Նա հեղինակավոր կերպով հաստատում է, որ դրանք կարված են մամոնտի մորթուց, և ամբողջ գիտական աշխարհը համաձայն է նրա հետ: Ուրեմն էլ ի՞նչ է ձեզ հարկավոր: